27. ԳՅՈՒՎԱՄԻՇ ԿԵՎԱՆԸ

Մի խիլլա տարե ըստրանա առաչ մեր շենըմը դունյա-դունյա շոռ եկած մին մարթ կար։ Ընդրան ասում ինքյ չանչախ Կեվան։ Էս Կեվանը վրդեղ նստում ար, փափաղը վեր կալած ուրան թարիփ ար անում, դյուվամիշ ար ընում, թա յրես էս տեսի, էն ըրի, էս մարթեն կըլխեն էս քյալագյը պիրա, ամմա յրես, հինչ անուրի, զարիր տրեղ էլ ընգալ ըմ, վեչ մինը կըրացալ չի՞, թա իմ կլխեն մին կուճուր մաղեն պտտկեն էլա նի կյա՞։

Մին դոնում մեր շենին աղսախկալ մարթիքյը տուս ին եկալ, եխծեն պատեն տակեն վրեննը կացալ, չուրուխ ին քաշում, մսլըհաթ ին անում։ Բուրդան տեսանք, մեր շնացե Ղազարը էշը եր իլած, կլոխը քաշ քցած կյամ ա։ Դուզն ասած, տա մրեզ դաստի տեսավ վեչ։

Մթկեն դոնն ընգած, էշը քշում ար, վար մեր հնգուրունցան մինը դգյասկած ասից։— Պարյօր, Ղազար, էտ կլոխտ կախ քցած, էշըտ թո՞րն ըս չո՞ւ անում, լայազ չըս անում պարյօր տաս մրեզ, հենց ա քյեփրտ էլ խարաբ ինի՞, մինթեվուր ըս։

Ղազարը բրգան վար տրեսավ մրեզ, էշը վրեննը ըրավ, պարյօր տվավ։ Սկսեցին հարցնիլ Ղզարան, թա.— Թո՞րն ըս քյնամ, վրդրղա՞ յրս կյա՞մ։

Ղազարը էշը պիհրան կապից, մեր քշտեն նստից, ըսկսից դրդրհան ինիլը։— Զփուռանց խաչուն անա մի քանի մանեթ ըմ եր կալալ վրդավ, վադան ընցալ ա, կրեցալ չըմ նիսյան տամ։ Մին

ամսին մաշին եկալ ա իցցուն մանեթ տառալ։ Խաշին դիվան դարա յա սարքալ, պրիստավ ա ղարկալ, թա պարտկս տո, յրես էլ օնիմ վե՞չ, վը՞րդըղա տամ, ըսեցե. «Տմաց, նոքյարոթուն, պան կանիմ, կտա՞մ»։ Պրիստավը եկալ ա խոխա-ըրախա առաչը ըրալ, թա յա պարտքը տո, յա Սիրիր ընք քշում։ Տեսա վար ճար չիկա, ըսեցի Երեմը քյննական ա Թիփլիզ, յրես էլ նհետը քյնամ Թիփլիզ, օրենքյեն նաղլ անիմ, բալքյամ քյոմագյ անե, մի թահր անե։ Երկրցա քյնացե մեր արզա կյրող Միրզին կոշտը, մին աբասի փող տվե, վրեննան, ծեռքան պչեցե, ըսեցե. «Քյմմատաղ, ա՛ Միրզա, ինձ հետե մին արզա կյրիս»։ Էտ ապրածը խոսկըս տափավը չի տըվավ։ Մին աբասին եր կալավ, մին էրգյան արզա կյրից։ Տարա Թիփլիզ, դարդըս մհե խրեգյ ար, էս Թիփլիզի կինտոնեն էլ մին քյալագյ պիրան կլոխս, վար մննաս ինգյնում չի՞։ Ջբումս մի մանեթ փող կար, ըն էլ հնեցին, տարա՞ն։

Ջանչախ Կեվանը, վար Ղղարեն էս նաղլը ըսկանըմ ա, ըրմանում ա, թա.— Տհենց պան չնի՞լ։ Օրիշը հի՞նչ ա գյուդում, թա քու չըբումտ հի՞նչ կա, համ էլ հո՞ւնց ա նի մննում շուբըտ, վար կլոխ չըս ընգնում։

Ղազարն ասում ա.— Դունյումըս տհենց մարթիքյ կան, վար ամեն փանդ գյուդում ըն։

Ջանչախ Կեվանն ասում ա.—Հես ա քյննական ըմ Թիփլիզ, տեսնամ էտ հի՞նչ տեսակ մարթիքյ ըն, վար տհենց պաներ ըն անում։ Պա յրես սաղ Ղալա՞ն, Գյանջա՞ն, բիրդան մինչև Բաղդագ էլ քյնացած ը՞մ, ամմա տհենց մարթիքյ տրեսած չը՞մ։

Մին քանի օրանը ետը Կեվանը հըղրցու հաց ա շինում, մին բոթուլ ըրաղու նհետ տնում հայբումը, շլակում, քյնամ Թիփլիզ։ Վար հըսնում ա Թիփլիզ, հացը օտում ա, էտ արաղն էլ լոխ խմում ա, պրծընում, բութուլկան կոտրում, բութուլկեն պըենձիգյնին էլ նի ածում շուբը, Թիփլիզին մեչավը տեսուտեն քյնամ։

Մին դաստա շահիլնի, տրեսնում ըն ըտրան շուբը չիկամ ա, գյուդում ըն, թա փուլ ա, խուսուցընում ըն, համ էլ շուրը ակը տամ։ Վար տրեսնում ըն պենձիկնի յա՞, պաց ըն թողում։ Ամմա էս Գյուվամիշ Կեվանը պան չի կլխու ընդնում։

Տա լհա ուրան էշն ա քշում, ըշվրծախ ա անում քյուշոցավը, տրեսնում ա ուրան անա մուտանող չիկա՞, ինքյը մուտանում ա էտ շահիլնրերին ասում.— Ցրես ծրեզ մատա՞ղ, էն օրը մրեր Ղազարը եկալ ա կոշտս նաղլ ընրալ, թա էլ Թիփլիզ չի քյնալ, ընդեղեն մարթիքյը փիս ջահիլնի յըն, լոխ շուբգյիրնի յը՞ն։ Պա հես ա էսքան

վա՜ղ յա ըշվըծախ ըմանում, էս քյուչոցավը ջուքս չխկըցնելավ, վեչ մինը մուտացավ վեչ ինձանա՛։

Էտ խոսկերեն յրան էն ղոլան մինն ասում ա.—Գյուվա՜միշ մի ինի՛լ, լոխ կինտոնին, լոթիքյը ջուքըտ ըն մտալ, ինքյ կա՜լ կոտրած սախսիքյըտ։

Ջանչախ Կեվանը թու՛րդա՜ն զըմանում ա, թա՜ պա էս հո՞ւնց նի մտան ջուքս, վեր գյիդացե վու՛չ։